


գիտնականները զրգուում են մոլեռանգ ամբոխը: որ գիշեր ժամանակ յարձակուում են միսսիօնարների վերայ և նոցանից երկուսին սպանում: Պէտք է ասել, որ Ենդշօֆուն շատ նշանաւոր ուխտատեղի է. նոցանից ոչ հեռու ծնունել է իւրեանց կրօնի հիմնադիր Կոնֆուցիոսը: այնտեղ է ապրել նա և այնտեղ քարոզել: ուստի և շատ բնական է Ենդշօֆուի ամբոխի կատարել մոլեռանգութիւնը: Գերմանական կառավարութիւնը ազգու միջոցների է ձեռք դարկել Չինաց կառավարութիւնից այս դէպքի համար բաւարարութիւն և երաշխաւորութիւն ստանալու նպատակով:



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

ԳՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

Братская помощь пострадавшимъ въ Турціи Армянамъ. (Նորայրական օգնութիւն Տաճկաստանում վնասուած հայերին). Մոսկուա, 1897 ամի:

Նորերումն լոյս տեսաւ այս վերնազրով մի բազմաբովանդակ և մեծազիր հատորով գրականական—գիտնական ժողովածու, որի հրատարակութեան համար Մոսկուայում մի առանձին խմբադրական յանձնաժողով էր կազմուել պ. Գրիգոր Զանդիեանի ղեկավարութեամբ:

Վերջին 3-4 տարիների ընթացքում հայոց ազգի կրած անասելի և անօրինակ հալածանքն ու կոտորածը Տաճկաստանում քարերին անգամ աղաղակել տուին և ամբողջ քրիստոնեայ աշխարհի կարեկցութիւնը շարժեցին դէպի մի աշխտատեղ և խաղաղ ժողովուրդ, որ տարապարտուց տաճկաց ձեռքից անխնայ կոտորուում էր: Շատ գրուեցաւ սոցա մասին, շատ զրքեր և զրքոյններ հրատարակուեցան. նոյն իսկ պաշտօնական վաւերաթղթեր երևան եկան ի հաստատու-

թիւն այն սոսկալի դաւադրութեան, որ Տաճկաց կառավարութիւնը կազմել էր հայոց դէմ՝ այդ խղճալի և խաղաղասէր ժողովուրդը խսպառ բնաջինջ անելու: Եթէ ոչ աշխարհի երեսից, զոնեայ Տաճկաստանի միջից և այդ զիւական մտադրութիւնը սխտեցաւ իրադրուել միայն նորա համար, որ բարեկենդու մներ մոցնելու պաշարումից ազատ մնայ Տաճկաց կառավարութիւնը: առարկելով թէ՛ հայ չկայ, որի համար այդ հարկաւոր է:

Մեր առաջ դրած մեծահատոր զիւրք այն կարեկցութեան արգասիքներից մինն է, որ Ռուսաց գրականութեան մէջ յայտնի բանասէրների աշակցութեամբ խմբադրուեցաւ և լոյս տեսաւ յօգուա թշուառացեալ հայերի: որոնք իւրեանց տուին ու անզը թողած, մերկ և անօթի թափառում են Կովկասի և հարաւային Ռուսաստանի ամեն անկիւններում: մեծաւ մասամբ դժբա զրկուած են աշխատող ձեռներից, որոնք Տաճկաց բարբարոսութեան զոհ են զնացել: հալածական և աստանդական թողնելով իւրեանց օջախի կանանց և երեխայոց: Այսօր այդ հալածանաց զոհերն են, որ ամեն մի մարդու, մանաւանդ քրիստոնեայ մարդու, էլ ուր մնաց արիւնակից հայ եղբայրների և քոյրերի կարեկից սիրան են ձմրում և դէպի բարեգործութիւն ու ընկերսիրութիւն հրաւիրում նորան: Կովկասը, մանաւանդ Երևանի և Կարսի նահանգները, և սառաւել Ս. Էջմիածինը, ահա քանի տարի է, որ ամենայն սիրով մի աստուածահաճոյ գործ են կատարում՝ խնամելով թշուառացեալ հայերին: կերակրելով նոցա և պասսպարելով: Դոցա աղաղակը հասել է ամեն տեղ, դոցա համար փող, շորեր և այլ անհրաժեշտ իրեր են ժողովում և մատակարարում: իսկ վերջին ժամանակ մի մեծ գործ էլ է աւելացել՝ այն է որբերի խնամատարութեան հոգալը: Մեր բարեխնամ կառավարութիւնը երկիցս թոյլ է տուել ընդհանուր հանգանակութիւն բանալ կարօտեալ զաղթականների համար և ահա այժմ ուսւ բանասէրներն իւրեանց լուսման են ձգում այդ սուրբ գործի համար:

Հրատարակուած զիւրքը շատ մեծ խնամքով է կազմուած, ուստի և արդէն արժա-

նացել է ամբողջ Ռուսաստանի մամուլի ջատագովութեան և ուշադրութեան:

Գիրքը սկսուում է մի խիստ սրտառու յառաջարանով, որ դրել է պ. Գրիգոր Զանչիեանը իւրեան յատուկ զեղեցիկ ոճով և ի սրտէ բղխած անկեղծ կարեկցութեամբ դէպի անմեղ զոհերը:

Գիրքը բաղկացած է՝

Ա. Նախարանից, որի մէջ տեղաւորուած են այնպիսի յօդուածներ, որոնք առնչութիւն ունին Հայոց որբերի և զաղթականների օգնութեան խնդրին: Նախարանը ըսկսուում է ս. Գրիգոր Նարեկացոյ Չայն հառաչանաց՝ով և Ա. Ժեմչուժնիկովի շորս տող հառաչանաց սիրուն ոտանաւորով, իսկ սոցատակ շատ խորհրդաւոր կերպով զեանգրուած է Գ. Դարբիէլեանի մի պատկեր՝ Հայը ազօթեւիս: Եւտոյ մի շատ յարմար ոտանաւոր կայ Կ. Բ. ստորագրութեամբ ս. Եովհաննու յայտնութեան այս տողերի վերայ՝ Ահաւասիկ կամ ես առ դուրս և բաղխեմ. եթէ որ լուիցէ ձայնի իմում և բանայցէ զդրունան, մաից առ նա և ընթրիս արարից առ նա, և նա ընդ իս. (Գ. 20):

Վ. Գորմատեմի Հայ-Նղբայրներ յօդուածը այնպիսի ջերմ համակրութեամբ և մարդասէր կարեկցութեամբ է գրուած, որ չի կարելի առանց յուզուելու և խոր խոցուելու կարգաւ Եօդուածադիրը յորդորում է ուսս հատարակութեանը թողնել Հայոց խնդրի մասին ունեցած թիւր կարծիքը, որ արդիւնք է անտեղի սնապաշտութեան, և ուսումնասիրելով փաստերը, այնպէս վերջնական կարծիք կազմել խնդրի մասին:

Եովհան Կրօնշատասիւ և Նղիշէ վարդապետի նամակները արգէն յայտնի են լրագիրներին, նոյնպէս և Մուշից ստացուած հեռագիրը տաճկաց նորանոր խժոժութեան մասին:

Դարձեալ մի ոտանաւոր Ա. Ժեմչուժնիկովի որ մի սրտառու զաղթ է թշուառի բերանինց:

Հանդիպումն Հայ-զաղթականների հետ Հայ-զաղթականները Ռուսաստանում, պաշտօնական տեղեկութիւնք տաճկաց խժոժութեանց մասին (1895), ինչպէս կենդանի ա-

ղասել Հայ մարտիրոսների որբ-երեխաներին (ամերիկական միսիօնարների հաղորդածից), — այս բոլորը իւր ժամանակին լրագիրներում տպուած յօդուածներ և տեղեկութիւններ են:

Նոյնպէս թարգմանարար հանած է Ա. Ահարոնեանի վէպը՝ «Փալաք-վուրդունի» վերնագրով:

Փ. Ո. Տիւտչեի վեց տող արտասուալից ոտանաւորը շատ յարմարուում է յիշեալ վէպի տխուր վերջարանին: Պերեվոդչիկովայի ոտանաւորը մերձաւորին օգնելը կեանքի սուրբ նպատակ է հռչակում:

Միսսիօնար Շարմեստանի գրքի մասին մի փոքր մատենախօսական յօդուածով Շը հայր հեղինակին Ֆրանսիական պարբերական թերթերի մէջ տաճկական խժոժութեանց դէմ առաջին բողոքողն է անուանում, որի շնորհիւ մեծ դումար ժողովուեցաւ յօդուած թշուառացեալ հայերի:

Հայ-զաղթականի երգը ոտանաւորով հայը իւր վերջին մնաս բարեն է ասում ստրկութեան լծի տակ ճնշուած հայրենի հողին:

Կ. Պօլսոյ ամեն ս. Պատրիարքի նամակից մի հատուած, որով յայտնում է խմբագրութիւնից 7,000 Ֆր. ստանալու մասին և հակիրճ բառերով նկարագրում է աղքատացած ժողովրդեան օգնելու մեծ կարիքը. մանաւանդ յիսուն հազար որբերի խնամոց կարօտ լինելը:

Մի համակրական ողջոյն բազմաչարչար Հայոց ազգին տալիս է Ե. Մորոզովը ոտանաւորով, որով յուսադրում է նորան՝ ասելով հաւատան զօրացիր և սպասիր. քրիստոնէական Նւրոպան չի թողնի, որ իսլամը արիւնով շաղախէ քո Գրիգորեան խաչը: Վերջ կը լինի քո արտասուէքին:

Լև Տոլստոյի ինքնաձեռագիր նամակի ընդօրինակութիւնից տեղեկանում ենք, որ յարգելի մատենագիրը ցաւ է յայտնում, թէ հանգամանքները չներեցին նորան գործունեայ մասնակցութիւն ունենալ Նղբայրական օգնութեան հրատարակութեան մէջ և յաջողութիւն է մաղթում ձեռնարկած գործին:

Սորանով վերջանում է նախարանը և սկսուում է առաջին բաժինը:

Բ. Առաջին մեծ բաժինը բաղկացած է

երկու մասից. առաջին մասում գեակուած են ընդհանուր գրականական և գիտական յօդուածներ:

Առաջին մասը սկսուում է Պերեվոդչիկովայի և Կ. Ր. Ի ոտանաւորներով: Յետոյ կարդում ենք Բելինսկու նամակազրուեթիւնը իւր կնոջ հետ, Բարովիկովսկու ոտանաւորը Առակի Տնունկը վերնագրով, Գրանովսկու համալսարանական դասընթացքը երկու ոտանաւոր Ա. Վալաօրիաի-ից, Գերցհենների կեանքից Վլադիմիրում (նամականիք), մի ոտանաւոր Ջիրոլամօ Մուցիոյի Մամին Սիրի-րեակի փոքրիկ վեպը Գիշեր վերնագրով, Բորոնցեվիչի նորավեպը Երկու ոգի, Ո. Կանսոնի Առ մահը (հայկական մեղեդի), Ն. Տեւէշովի Կեանքի զոհեր նկարագիրը և Վ. Սպասովիչի Տիրոջ չարչարանքները Օրէր-Ամեր-դայուի մէջ (ճանապարհորդական ապաւորութիւններ):

Երկրորդ մասի մէջ գեակուած են զըլխաւորապէս Հայոց անցեալին և ներկային վերաբերեալ յօդուածներ: Խմբագրութեան բացատրութեամբ Հայոց վիճակին անձանօթ լինելն է եղել և է աղբիւր փնասակար թիւրիմացութեանց, ուստի և առատութեամբ աշխատել է լրացնել այդ թերին ճշգրիտ տեղեկութիւններ տալով Հայոց կեանքից: Խմբագրութիւնը շատ լաւ ըմբռնել է Լամարտինի իրաւացի նկատողութիւնը, թէ ոչ մի բան այնքան չի նպաստում այլ և այլ ցեղերի մէջ նկատուած խտրութեանը, նախանձին և թշնամութեանն, որքան ազիտութիւնը, իսկ Ռուսաց մէջ ո՞ր աստիճանի է հասել թերի ծանօթութիւնն անգամ հայ ազգարնակութեան կենցաղի և տրամադրութեան մասին Կովկասում, ասում է խմբագիրը յառաջաբանում, կարելի է տեսնել հետեւեալ օրինակից. Մեղանում, ասում է նա, շատերը սովոր են կարծել, մինչև անգամ և մամուլի մէջ հաստատել, թէ Հայերը գրեթէ ամբողջովին պատառարոյճներ են և պարագում են գիւրին և արգիւնաւոր առևտրով և վաշխառութեամբ: Վիճակազրական անհրեքի փաստերը, որոնք առաջ են բերուած Ա. Ն. Սաղանովի յօդուածի մէջ, ցոյց են տալիս թէ որքան սխալ է այդ ստորաձուած նախա-

պաշարմունքը, որ հիմնուած է անցողական և պատահական ապաւորութեանց վերայ: Ամեն մարդ չի հաւատալ, այն ինչ անպայման կերպով հաստատ փաստ է, որ հայերի մեծագոյն մասը ի հնուց անտի երկրագործ է եղել և ցայսօր էլ նոյն վիճակի մէջ է: Ռուսաստանում բնակուող մի միլիօն հայերից հարիւրին ութսունը պարագում է երկրագործութեամբ, իսկ Հայոց ազգի նախնական բնակավայրում՝ նախկին Հայկ կան նահանգում, ուր 845,667 հայ բնակիչ կայ, նախնական ժամանակներից նուիրուած է այդ իւր սիրած պարագմունքին հարիւրից ինըսուն և վեցը, ուստի և ի զուր չէ ժառանգել պատմութեան մէջ «աշխատասէր» մակդիրը: Այս երկրագործ դասն է ժողովում երկրի բոլոր հացի կէս մասը: Ահա քեզ և պատառարոյճեր, բացականչում է խմբագիրը:

Առաջին բաժնի երկրորդ մասը սկսուում է իշխան Լ. Ուխտովսկու Կալիթայի Հայերը և Բուզդա-Դայա՝ յօդուածով, որ հանած է թագաւոր կայսեր «Ճանապարհորդութիւն յարեկս» գրքից: Յետոյ գալիս է մի ոտանաւոր Վ. Գեսսէնի, ապա Ս. Փիլիպպովի Ամսյութեան մէջ (Կ. Պօլսոյ նկարագրից) յօդուածը, Ս. Չախտաինի Տաճկաց գերեզմանատուն Ուսկիւտարիի մէջ ոտանաւորը, Ո. Թարխանովի գրուածքը Գիտութեան երեակայական սնանկութեան մասին, Ն. Կարիշեի Ժողովրդական անտեսութեան պատմութիւնից հատուածը, Պանագիստ Փեղրի Զոյժիկ չափածոց առակը, Մ. Կովալեւսկու Գիւղական շարժումների պատմութիւնից արեմուտքում ուսումնասիրութիւնը, Ա. Ժեմնուժնիկովի չորս տող ինքնակենսագիր ոտանաւորի ընդօրինակութիւնը:

Այս ընդհանուր գրականական գրուածքներից հետեւում է Գր. Խալաթեանի Սասունցի Դաւիթը՝ իրրե օրինակ հայկական ժողովրդական զրոյցի:

Յետոյ զարձեալ մի գրուածք ընդհանուր գրական բովանդակութեամբ Լուսանկարչութիւնը և բնութեան զգացողութիւնը վերնագրով Կ. Տիմիրեագեւի: Ո. Բելոուսովի մի սիրուն ոտանաւոր և ապա Դիօնէօի Դարնանը (ճանապարհորդական յիշողութիւններ-

րից) գրուածքը կոմսուհի Ռևիարովայի ծանայարհորդութիւնը դէպի Փշաւիա և Սեւսուրիա Դարձեալ մի ոտանաւոր Իմարտ' Ե. Ալիբեգեանի Երկու նախադիժ ճորտերի ազատութեան համար. մինը կոմսուհի Վիկելգորսկայա'ի միւսը՝ Փ. Վեկրոտի. երկուսն էլ կազմուած են դարուս սկզբներում և պատմական նշանակութիւն ունին, իբրև փորձեր այն մեծ գործի որ յաջողուեցաւ շատ աւելի ուշ՝ մեր օրերում:

Ընդհանուր բովանդակութեամբ են նաև Ն. Ստորոճենկոյի յօդուածը նշանաւոր բանաստեղ Շելլենկոյի մասին Հանձարեղ վշտահարը վերնագրով. Իր. Զանչեանի Պատմութեան պայծառ երեսը (ճորտերի ազատութեան 36 ամեակի առթիւ) մի պատմական հայեացք, Վ. Գեսսէնի երկտուն ոտանաւոր. Օրնինսկու՝ իմ յիշողութիւններից գրուածքը. Ի. Աստախովի խուլ անկիւնում փոքրիկ պատմութիւնը. ԲուզովՖ Շարացի Անմեկնելի գաղանփի առաջ վերնագրով պատմութիւնը. Վ. Գիլարովսկու բարեկամին վերնագրով ոտանաւորը. Ն. Ս.-ի յիշողութիւններից Վ. Ա. Արցիմովիչի մասին. Բելոգոլովու յիշողութիւնները կոմս Մ. Տ. Լոռու-Մելիքեանի մասին. Իր. Զանչեանի յիշողութիւնները Բելոգոլովու մասին. Մ. Սալախովի Բելոգոլովուն գրած վերջին նամակները. վերջին ինքնաձեռագիր նամակի ընդօրինակութիւնը. Կ. Բալմոնտի երեք ոտանաւոր՝ Զլոտովրատսկու գրականական յիշողութիւններից (Տուրգենևի, Սալախով և Գարշին). Երկու առղ. Ս. Զարուզնու մասին. Ա. Ժեմչուժնիկովի մի ոտանաւոր:

Այս յօդուածներից յետոյ, որոնց դասաւորութեան մէջ որոշ կարգ հնար չի եղել պահպանելու, կարգում ենք Լ. Մսերեանի Երկու գիտնական վանքեր (Վենետիկ և Վենայի Միլիթարեանները) գրուածքը. Դ. Ալիշանի Հայաստանի բնական աշխարհագրութեան նկարագիրը Արգար Յովհաննիսեանի Թարգմանութեամբ:

Վ. Միլլերի Թարգմանութեամբ այս մասում տպուած է Սանկրիտերէնից Կալիդասայի Վիկրամորվաչի պոեմութիւնը. Հէյնէի մի ոտանաւոր:

Դարձեալ մի շարք կենսագրութիւններ հայազգի զօրապետների՝ Յ. Լազարեանի, Ա. Տ. Ղուկասեանի, Բ. Շելկովիկեանի և Յ. Ալիսագեանի (ի զուր Լոռու-Մելիքեանին սոցանից անջատել են), որոնք համաշխարհային համբաւ ու հռչակ են վայելում իւրեանց պատերազմական հանձարով և այն յաղթական հերոսութեամբ, որ ցոյց են տուել պատերազմի դաշտում և որոնք Հայոց ազգի պարծանքն են. բոլորն էլ հաւասար չեն միմեանց իւրեանց հանձարով, բայց բոլորն էլ սոցա հետ և շատ զօրապետներ Հայոց ազգի մի բանում նման են միմեանց՝ այն է իւրեանց ջերմ սիրով դէպի Ռոսաստանի շահերը և նորա փառաց համար ծառայելը իւրեանց համար սկզբունք են դարձրել և այդ սկզբունքը իւրեանց կեանքի մէջ անվթար գործ են դրել և իւրեանց անձնագոհութեամբ քաջալեր եղել ամբողջ ազգի համար: Մոքա անմահ կը մնան Ռուսաց ոչ միայն զինուորական պատմութեան մէջ, այլ և սերունդէ սերունդ կը յիշուին ամբողջ Ռուսաստանում և օրինակ կը լինին ամեն մի հաւատարիմ հպատակի համար, օրինակ հաւատարմութեան, անձնագոհութեան և անկեղծ սիրոյ առ Դահն Ռուսաց:

Վիկտոր Հիւզոյի ոտանաւորով որ Յունաց ազատութեան խնդրին է վերաբերում, կնքուում են այս կենսագրութիւնները:

Մի փոքր հատուած Վերեսչագինի յիշատակարանից նկարչութեան վերաբերեալ և ապա հայազգի մեծահռչակ ծովանկար Յ. Այվազովսկու մասին երկու խօսք: Ապա Մալախովի յօդուածը Համլէտ ողբերգութեան մասին և Համլէտի դերը առաջին անգամ Հայոց բեմի վերայ ներկայացնող հանրածանօթ Պետ. Աղամեանի կենսագրութիւնը:

Մ. Նիկոլսկու մի շատ հետաքրքրական յօդուած՝ Ռւբարտու (Արարատ) հին երկիրը և ասորա—բաբելական քաղաքակրթութեան հետքերը Կովկասում: Ա. Գրիւնի Մեր ժամանակը վերնագրով ոտանաւորը:

Արատագուած է նաև 1895-ին Прав. Вѣст.-ի հանդամանօրէն յօդուածը Հայոց Հայրապետները վերնագրով որին հետևում է Պատրիարք-Կաթողիկոս Մկրտիչ Ա. (Հայ-

րիկ) կենսագրութիւնը և Ծորին Ս. Օժու-
թեան երկասիրութիւններէից հանած մտքերը
և Երզը «Հայրիկ» Հայրիկ»:

Յետոյ կարգում ենք Ա. Չորանեանի Հին—
Հայոց Գրականութիւնը Լ. Մսերեանի թարգ-
մանութեամբ:

Մեր Շարականի Մ. Էմինի Ռուսերէն
կղասիքական թարգմանութեան յառաջարա-
նը և վեց կանոնները ճաշակ են տալիս մեր
կեկեղեցական գրականութեան մասին:

Բառոն Ծտակերէրզի Մի քանի խօսք
Հայոց պատմագիրների նշանակութեան մասին
Սասանեան Պարսկաստանի ուսումնասիրու-
թեան համար Գր. Սալաթեանի Երկու հայ-
կաբաններ (Մ. Էմին և Բ. Պատկանեան) յօ-
դուածը—շատ մօտ ծանօթութիւն են տալիս
Հայոց Հին գրականութեանը:

Գ. Միրովի ոտանաւորը Պարթենոնի ա-
ռաջ, Վ. Գոլցեվի Լեոն Բուրժուան համե-
րաշխութեան մասին վերնագրով նկատողու-
թիւնը Բուկիայի «Ազգասիրութիւն» և ազ-
գասիրութիւն—գրուածքը Պ. Միզման ազ-
գայնականութեան մասին, Հայերը Ռուսաս-
տանում՝ Գ. Բանանեանի, սորա յիշատակին
նուիրուած յօդուածը, Գրեվի ակնարկները
Հայոց պատմութիւնից, Ա. Սախանովի՝ Հա-
յերի վիճակը Վրաց թագաւորութեան մէջ,
Սաղոնովի յայտնի վիճակագրական տեղեկու-
թիւնները «Հայերը Կովկասում» վերնագրով
Մի քանի նկատողութիւններ հայերի դէմ
յարձակմանց առթիւ, Կոստոսից հանած Եր-
կաթի դար ոտանաւորը, Գր. Սալաթեանի
յօդուածը Հայոց առականների մասին, Ախթա-
մար ոտանաւորը, Մինաս Բերբերեանի նկա-
տողութիւնները Հայոց արդի գրականութեան
մասին, Աղէքսանդր ծառուերեանի երկու ո-
տանաւորի թարգմանութիւնը, Իւրիյ Վեսե-
լովսկու յօդուածը Հայոց արդի գրականու-
թեան քննադատութեան մասին, Բաֆֆի-ի մի
փոքրիկ վէպ և Հայ—Արմենի երկտուն ոտա-
նաւորը—ահա այս ամենը ի մի ժողովուած
շատ հարուստ պաշար են մեր գրականութեան
ծանօթութեան համար, որ առաջարկում է
ընթերցողներին ժողովածուի խմբագրութիւ-
նը: Ոչ մի գրական հանդէս, նոյն իսկ մեր
հանդէսներից, մի համարում այդքան նիւթ

չի կարող տալ որքան առատօրէն և այն ընա-
րովի առեւ է Երզրայրական օգնութիւնը: Ար-
դարև մեծ ծառայութիւն է մատուցել պ.
Գր. Զանչեանը Ռուսաց գրականութեանը
այդպիսի մի սիրուն դասաւորուած պաշար
առաջարկելով նորան, որ բարեմիտ գրասեր-
ների համար անսպասելի ուսումնասիրութեան
նիւթ է Հայոց գրականութեան ծանօթու-
թեան համար:

Վ. Կորոլենկոյի կռուի մէջ Սատանայի
հետ ճանապարհորդական նկատողութեամբ, Վ.
Երովովի Գիրք և Ժողովուրդ խորհրդածու-
թեամբ և Ա. Վեսելովսկու Զգայուն և Սառն
վերնագրով գրուածքով վերջանում է առա-
ջին մեծ բաժինը:

Երկրորդ բաժինը փոքր է, բայց շատ
յուզիչ իւր բովանդակութեամբ: Սկսուում
է Տիւաչեի շորս տոգ սրտառուչ ոտանաւո-
րով, Լըրուա Բոլիէի խոր սրտից բղխած մի
քանի տողով Սասնոյ կոտորածի առթիւ և
Ֆրանսիական դեսպան՝ Կաժբոնի խօսքով, թէ
Տաճկաստանում բարենորոգումներ մտցնելու
համար, այնտեղ ամեն ինչ պէտք է կերպա-
րանափոխել:

Յետոյ Կ. Բ.-ի Հառաչանաց Կամուրջը
ոտանաւորն է տեղաւորուած, կոմս Լ. Կոմա-
րովսկու յօդուածը բարենորոգմանց մասին
Տաճկաստանում, Է. Դիլլօնի իրերի վիճակը
Տաճկական Հոյաստանում (նախքան 1895-ի
կոտորածը), Պ. Բելեայեվի Տաճկաց զոհերի
նամակները Փոքր Ասիայից (1895—1896),
Նլզիզի կեանքը, Իզմիրկան Պատրիարքի կեն-
սագրութիւնը, Սաւելիւսկի ոտանաւորը, Կ.
Պօլոսոյ կոտորածը (Օ. Կայդանովայի նամակը
Կ. Պօլոսոյ), Վ. Բերարի՝ օղոստոսի սպանու-
թիւնները Կ. Պօլոսում (1896), Հայկական
խնդիրը Ֆրանսիական Դեղին զրքի վաւերա-
թղթերով, Արարատից հանած՝ կոտորած Վա-
նայ վիլայիտում թղթակցութիւնը, Ա. Տօլ-
ստոյի ոտանաւորը, Ֆրանսիական Le Mord
լրագիրը Տաճկաստանի մասին և Փ. Տիւաչե-
ի ու իշխան Է. Ուխտամսկու փոքրիկ յու-
սագրական ոտանաւորը—կազմում են զրքի
ամենաախուր երեսները, որոնց ամեն մի տողը
արիւնով է գրուած և արտասուքով ողո-
ղուած . . . :

Գիրքը բաղկացած է՝ յառաջարանը a-g, նախարանը՝ III—XLVIII, Առաջին բաժինը 1—752 և Նրկորդը՝ 1—128 մեծագիր երեսներին: Գիրքը զարգարուած է Յ. Այվազովըսկու շորս ինքնուրոյն պատկերներով, Վ. Սուրէնեանի ծաղկանկարներով, Հեղինակներին ինքնաձեռագիր ընդօրինակութիւններով և 160 պատկերներով տեսարաններով, Անդրկովկասի, Տաճկական Հայաստանի և այլ տեղեաց տիպերով:

Ի միջի այլոց պատկերներին մէջ գետեղուած են Վեհափառ Տ. Տ. Մկրտիչ Ա. Կաթուղիկոս Ամենայն Հայոց (երկու), Տ. Գեորգ Գ., Տ. Մատթէոս Պատրիարք Իզմիրեան (երկու): Տ. Խորէն Արքեպիսկոպոս Նարեկ, Հ. Ղ. Ալիշան, Հ. Այտրեան, Վեհ. Հայրիկի ընտրող ժողովի պատգամաւորներ, Մ. Լուսու—Մեկլեբեան, Յ. Լազարեան, Ա. Տ. Ղուկասեան, Բ. Շեղովիկով, Յ. Ալիսաղով, Յովհ. Այվազովսկի, Մ. Եմին. Բ. Պատկանեան, Ռ. Պատկանեան, Գ. Բանանեան, Պ. Ադամեան և այլք:

Գինն է՝ հասարակ թղթի վերայ 4 ու իսկ լաւի վերայ՝ 5 ու:

Պահեստը գտնուում է Մոսկուայում Կարբանիկովի գրալաւաւանոցում: (Մոսկովայեա):



ՄԵՐ ԵՐԿՈՒ ԳՐԱԿԱՆ ԼԵՋՈՒԻ ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԳԻՐԸ.

(Շարունակութիւն ևս վերջ) *



Երկու գրական լեզուի էական տարբերութիւնը որ այժմ վերացնել անհնարին է անշուշտ բայերի խոնարհման մէջ է և սահմ. ներկայ և անցեալ անկատար ուսում եւ և կուսեւ, ուսում էի և կուսի ձեւերի և անոնց բացասականների մէջ, Այս տարբերութիւնը մենք էական ենք կոչում, զի մինչդեռ միւս տարբերութիւնները մեծ մասամբ հընչեւեական են, այս՝ արամաբանական, մտածողութեան եղանակի տարբերութիւն է և կուսեւ ձեւն արեւելեան հայերի համար միայն ապաւնի է իսկ կուսի միայն պայմանական, մինչդեռ արեւմտեան հայերի համար՝ նոյն ձեւերը թէ ապաւնի ու պայանական են և թէ սահմ. ներկ. և անց. անկ.:

Ուրիշ խօսքով արեւելեան լեզուն արեւմտեանի մի երկիմաստ ձեւի զիմաց՝ ամեն մի իմաստի համար առանձին ձեւ ունի, ներկան և ապաւնին, անց. անկ. և պայմանական ձեւերը կատարելապէս անջատած է իրարուց, իսկ արեւմտեան լեզուի մէջ այդ անջատումը չկայ, ո՞նչ ասել կուզէ որ մտածութեան եղանակը փոխել տալը զիւրին չէ. ուստի և այս կէտի մէջ որքան և միութիւն ցանկանանք, այժմ այդ անհնարին կը լինի զլուխ բերել:

Բայերի խոնարհման մէջ եղած այս էական տարբերութիւնը, որ կայ երկու գրական լեզուի մէջ, հետեւանք է իսկապէս արեւելեան գրական լեզուի սկիզբը գնողների գործունէութեան. զի այն որ այժմ անհնարին ենք համարում անել, 1850-ական թուականներին, ոչ միայն հնարաւոր էր այլ և ամենայն հեշտութեամբ կարելի էր, Երեւակայեցէք մի բոլակ, որ այդ ժամանակներում գրական լեզուն առաջ բերելու համար գրագէտները, ինչպէս Նալբանդեանի նամակներից և ուրիշներից երևում է, դեռ խորհում էին թէ որ բարբառը հիմք ընդունեն գրական լեզուի համար, Մշու, Ասորիսանի, թէ Երարատեան բարբառը, Գերակշռութիւնը, հարկաւ ոչ առանց ուրիշ ազդեցիկ հանգամանքների ևս, արեւում է Երարատեան բարբառին, որին մտն են Թիֆլիսի, Ասորիսանի և Վարաբաղի բարբառները, Բայց եթէ այդ մարգիւր, որոնց մենք պարտական ենք մեր արեւելեան գրական լեզուի և գրականութեան սկզբնաւորութիւնը, աւելի լուրջ ուսումնասիրութեան ենթարկելին այդ խնդիրը և յատկապէս գրական լեզուի միութիւնն ի նկատի ունենային, նրանք բայերի խոնարհման մէջ գերակշռութիւն կըտային կը ձեւին և ոչ ում ձեւին, Մենք չենք գատապարտում այդ միշտ յիշելի մարդկանց, այլ միայն իրողութիւնն ենք քննութեան առնում. անշուշտ կային պատճառներ, որ նրանք այդպէս վարուեցան:

Եթէ մեր բարբառներին ուշադրութիւն գարձեննք, կը տեսնենք, որ հայ ժողովրդի մեծ մասի մէջ ոչ թէ ում ձեւն է գործածական այլ կը ձեւը, Բոլոր արեւմտեան հայերը կը ձեւով են մտածում և խօսում, ինչպէս և Ռուսիայի սահմաններում եղած հայերից Ալէքսանդրապոլի, Ապարանի և ուրիշ կողմերի, արեւմտաքից գաղթած հայերը, ինչպէս և Նոր-Նախիջևանի ու Խրիմի հայերը. իսկ ում ձեւով մտածում և խօսում են, եթէ կարելի է այսպէս ասել, ծայրագոյն արեւելքի հայերը՝ Ասորիսանի, Ազլարի, Թիֆլիսի, Վարաբաղի և, որ գլխաւորն է, Այրարատի հայերը, ինչպէս և այս վերջին երկրից և Սիւնեաց կողմերից դէպի Պարսկաստան բռնի կամ կամաւոր գաղթած հայերը, Բուն պարսկահայոց բարբառներն ևս, ինչպէս Խոյի և Սալմաստի հայերինը, որոնց գաղթականները 1829 թուից ի վեր տարածուած են Ռուսահայաս-